# Ինչպես ստանալ
# սոցիալական ծախսի փոխհատուցումը






www.src.am

# Քայլ 1

## Մուտք գործել համակարգ




Մուտք գործեք Ֆիզիկական անձանց էլեկտրոնային ծառայությունների միասնական համակարգ, ապա անցնելով «Հարկային հաշվեկշիռ» բաժին՝ «Սոցիալական ծախսեր» պատուհանում կտեսնեք, թե որքան է կազմում վերադարձման ենթակա գումարը:

# Քայլ 2
## Ընտրել դիմումի ձևը




Հաջորդ քայլով վերադարձեք համակարգի գլխավոր էջ և մուտք գործեք «Հայտարարագրեր» բաժին, ապա «Հայտարարագրերի ձևեր»-ից ընտրեք «Դիմում՝ միասնական հաշվից գումարները վերադարձնելու համար»:

# Քայլ 3
## Լրացնել դիմումը




Բացված պատուհանում լրացրեք բանկային հաշվեհամարը և փոխհատուցման ենթակա գումարի չափը: Հաշվեհամարը լրացնելուց հետո բանկի անվանումը կլրացվի ինքնաշխատ: Դիմումը լրացնելուց հետո սեղմեք «Գրանցել» կոճակը:

# Քայլ 4
## Սեղմել Մարում/վերադարձ




Դիմումը գրանցելուց հետո կբացվի պատուհան, որտեղ անհրաժեշտ է սեղմել «Մարում/վերադարձ» կոճակը՝  փոխհատուցումն ստանալու համար:

# Քայլ 5
## Ստորագրել և հանձնել




Գրանցված դիմումը հայտնվում է «Լրացված հայտարարագրեր» բաժնում: Վերջին քայլով պետք է սեղմել ստորագրել կոճակը, ընտրել ստորագրության տեսակը և էլեկտրոնային տարբերակով ստորագրել դիմումը, ապա սեղմել «Հանձնել ՊԵԿ» կոճակը: